ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՎԷԷՀ-ԳՀԾՁԲ-01/2024

ք. Երևան «05» մարտի 2024թ.

«Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամ», ի դեմս տնօրեն Կարեն Ասատրյանի, որը գործում է իր կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԷՖԵՍ» ԱՓԲԸ-ն, ի դեմս գլխավոր գործադիր տնօրեն Արևշատ Մելիքսեթյանի, որը գործում է իր կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է աշխատակիցների առողջության ապահովագրության ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1, 1.1, հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս կողմից մատուցված պատշաճ ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ վճարան ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու պատշաճ մատուցված ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության պատշաճ մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 5355000 (հինգ միլիոն երեք հարյուր հիսունհինգ հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է պայմանագրի 3-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում՝ ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

2. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[21] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն սահմանված ժամկետում չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:[21.1]

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորություններն ամբողջությամբ և պատշաճ՝ պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Կիրառելի չէ:

7.7 Կիրառելի չէ

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի գրավոր առաջարկի առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի համար ծառայության մատուցման պահանջը չի վերացել, իսկ Կատարողի գրավոր առաջարկը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավելի քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման շրջանակներից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, 1.1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ

Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամ
Հասցե՝ ք. Երևան, Սայաթ Նովա պողոտա 29/1
ՀՎՀՀ 02580459
Հեռախոս՝ +374 10 58 80 11
Էլ. փոստ՝ info@r2e2.am
«Ինեկոբանկ» ՓԲԸ
h/h 2050422345051001

Տնօրեն՝ Կարեն Ասատրյան

ASATRYAN KAREN 3611790125

Digitally signed by ASATRYAN KAREN 3611790125
Date: 2024.03.06 13:20:44 AMT

Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

«ԷՖԵՍ» ԱՓԲԸ
Հասցե՝ ք. Երևան, Հր. Քոչար 35/1
ՀՎԷԷՀ 08261284
Հեռախոս՝ +374 10 700 800
Էլ. փոստ՝ info@efes.am
«Արարատբանկ» ԲԲԸ
h/h 1510012541361314

Տնօրեն՝ Արևշատ Մելիքսեթյան

MELIKSETYAN AREVSHAT 2008830063

Digitally signed by MELIKSETYAN AREVSHAT 2008830063
Date: 2024.03.05 16:11:46 +04'00'

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված N 1
05» Մարտ 2024թ. կնքված
ՀՎԷԷՀ-ԳՀԾՁԲ-01/2024 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	Ժամկետը**
1	66511120	Աշխատակիցների առողջության ապահովագրության ծառայություններ՝ համաձայն կից Հավելվածի	դրամ	5355000	1		Պայմանագրի կնքման օրվանից մինչև 2024թ-ի դեկտեմբերի 25-ը

** ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամ
Հասցե՝ ք. Երևան, Սայաթ Նովա պողոտա 29/1
ՀՎՀՀ 02580459
Հեռախոս՝ +374 10 58 80 11
Էլ. փոստ՝ info@r2e2.am
«Ինեկոբանկ» ՓԲԸ
h/h 2050422345051001

Տնօրեն՝ Կարեն Ասատրյան

ASATRYAN KAREN 3611790125

Digitally signed by ASATRYAN KAREN 3611790125
Date: 2024.03.06 13:21:34 AMT

ԿԱՏԱՐՈՂ

«ԷՖԵՍ» ԱՓԲԸ
Հասցե՝ ք. Երևան, Հր. Քոչար 35/1
ՀՎԷԷՀ 08261284
Հեռախոս՝ +374 10 700 800
Էլ. փոստ՝ info@efes.am
«Արարատբանկ» ԲԲԸ
h/h 1510012541361314

Տնօրեն՝ Արևշատ Մելիքսեթյան

MELIKSETYAN AREVSHAT 2008830063

Digitally signed by MELIKSETYAN AREVSHAT 2008830063
Date: 2024.03.05 16:12:11 +04'00'

Հավելված N 1.1
«05» Մարտ 2024թ. կնքված
ՀՎԷԷՀ-ԳՀԾՁԲ-01/2024 ծածկագրով պայմանագրի

ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

21 աշխատակցի համար ապահովել առողջության ապահովագրության ծառայություններ հետևյալ տեխնիկական բնութագրին (փաթեթին) համապատասխան.

1. ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	ՍԱՀՄԱՆԱՉԱՓԵՐ
Ծրագրով նախատեսված ծառայությունների և հիվանդությունների բուժման հետ կապված ծախսերը հատուցվում են հետևյալ դեպքերում՝ ✓ **Անհետաձգելի բուժում պահանջող հիվանդություններ և վիճակներ** ✓ **Սուր հիվանդություններ և վիճակներ** ✓ **Քրոնիկ հիվանդությունների բուժում** ✓ **Պլանային բուժում պահանջող հիվանդությունների վիրաբուժություն և/կամ միջամտություն** Ծրագրով նախատեսված ծառայությունները ենթակա են հատուցման սույն առողջության կամավոր ապահովագրության պայմանագրի ներքո ապահովագրված յուրաքանչյուր անձին, եթե մատուցվել են ապահովագրության պայմանագրով ապահովագրված անձի ապահովագրության գործողության ժամկետում:	
1.1. ՇՏԱՊ ԵՎ ԱՆՀԵՏԱՁԳԵԼԻ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ	
1.1.1. Շտապ օգնության խմբի շուրջօրյա այց, այդ թվում՝ մասնագիտացված 1.1.2. Բժշկի առաջնային զննում, նախնական ախտորոշում 1.1.3. Անհետաձգելի ախտորոշիչ-բուժական միջոցառումների իրականացում կանչի վայրում 1.1.4. Անհետաձգելի բուժման դեղորայքային ապահովում 1.1.5. Հիվանդի տեղափոխում Բժշկական հաստատություն առանձնակի դեպքերում, երբ անհրաժեշտ է հատուկ կահավորված սանիտարական տրանսպորտ և անհրաժեշտ մասնագիտացում ունեցող բժշկական անձնակազմի ուղեկցություն	Հատուցվում է
1.2. ԱՄԲՈՒԼԱՏՈՐ ԲՈՒԺՕԳՆՈՒԹՅՈՒՆ	
1.2.1. Խորհրդատվական ընդունելություններ բժիշկ-մասնագետների կողմից, այդ թվում՝ նեղ մասնագետների 1.2.2. Թերապևտիկ հիվանդությունների բուժում 1.2.3. Վիրաբուժական հիվանդությունների բուժում 1.2.4. Վնասվածքների (կոտրվածքներ, հոդախախտեր, փափուկ հյուսվածքների սալջարդ, վերքեր կամ դրանց համակցում) բուժում 1.2.5. Այրվածքների, ցրտահարությունների և էլեկտրահարությունների բուժում 1.2.6. Ինֆեկցիոն հիվանդությունների բուժում 1.2.7. Թունավորման թեթև ձևերի ամբուլատոր բուժում 1.2.8. Լաբորատոր ախտորոշում. համակլինիկական, բիոքիմիական, մանրէաբանական, շիճուկաբանական, հորմոնալ, ցիտոլոգիական և իմունաբանական 1.2.9. Գործիքային ախտորոշում. ռենտգենաբանական հետազոտություն, ուլտրաձայնային հետազոտություն, ֆունկցիոնալ, էնդոսկոպիկ զննումներ, համակարգչային տոմոգրաֆիա, մագնիսառեզոնանսային տոմոգրաֆիա	Հատուցվում է
1.3. ՍՏԱՑԻՈՆԱՐ ԲՈՒԺՕԳՆՈՒԹՅՈՒՆ	
1.3.1. Դժբախտ պատահարների հետևանքով հոսպիտալացում 1.3.2. Թերապևտիկ հիվանդությունների բուժում 1.3.3. Վիրաբուժական հիվանդությունների բուժում 1.3.4. Ինֆեկցիոն հիվանդությունների բուժում 1.3.5. Վնասվածքների (կոտրվածքներ, հոդախախտեր, վերքեր, սալջարդեր, պոլիտրավմաներ) բուժում, բացառությամբ վնասվածքաբանական վիրահատությունների ժամանակ կիրառվող մետաղական կոնստրուկցիաների 1.3.6. Ներքին և արտաքին արյունահոսությունների բուժում 1.3.7. Այրվածքների, ցրտահարությունների և էլեկտրահարությունների բուժում 1.3.8. Թունավորումների բուժում 1.3.9. Ինտենսիվ թերապիա և ռեանիմացիոն միջոցառումներ պահանջող անհետաձգելի վիճակների բուժում 1.3.10. Լաբորատոր և գործիքային ախտորոշիչ հետազոտությունների իրականացում: Անգիոգրաֆիկ հետազոտությունները, այդ թվում՝ կորոնարոգրաֆիան, հատուցվում են այն դեպքում, երբ այդ հետազոտությանը հաջորդում է Ծրագրով նախատեսված վիրահատական միջամտություն	Հատուցվում է
1.3.11. Սրտանոթային միջամտություններ և վիրահատություններ.*	Հատուցվում է

1.3.11.1. Կորոնար զարկերակների ստենտավորում (դեղապատ և/կամ ոչ դեղապատ ստենտով) 1.3.11.2. Անգիոպլաստիկա դեղապատ բալոնով 1.3.11.3. Աորտակորոնար շունտավորում 1.3.11.4. Աորտայի պրոթեզավորում (անհետաձգելի դեպքերում՝ աորտայի անևրիզմայի շերտազատում)	
*Սույն կետով բացառություն են հանդիսանում հետևյալ վիրահատությունները՝ սրտի փականների պլաստիկա, պրոթեզավորում, սրտի ռիթմը կարգավորող, վարող սարքերի տեղադրում:	
1.3.12. Անոթային վիրահատություններ և միջամտություններ	Հատուցվում է
1.3.13. Նյարդավիրաբուժական վիրահատություններ և միջամտություններ	Հատուցվում է
1.3.14. Չարորակ ուռուցքային հիվանդությունների բուժում	Վիրահատական բուժում, նաև 1 կուրս ճառագայթային բուժում կամ քիմիաթերապիա
1.3.15. Բժշկական հաստատությունում կացության ծախսերի (հիվանդասենյակի արժեքի) հատուցում	Օրական 15,000 դրամի սահմաններում
1.4. ՔՐՈՆԻԿ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՈՒԺՈՒՄ	
1.14.1. Ամբուլատոր բուժում պահանջող քրոնիկ հիվանդությունների սրացումներ	Հատուցվում է
1.14.2. Ստացիոնար բուժում պահանջող քրոնիկ հիվանդությունների սրացումներ	Հատուցվում է
1.14.3. Քրոնիկ հիվանդությունների պահպանողական բուժում և դինամիկ հսկողություն	200,000 ՀՀ դրամի սահմաններում
1.14.4. Պլանային բուժում պահանջող հիվանդությունների վիրաբուժություն և/կամ միջամտություն	Հատուցվում է
*1.4.3 և 1.4.4 կետերով ապահովագրական ծածկույթում նոր ընդգրկված ընտանիքի անդամների համար գործում է սպասման ժամկետ[4]՝ 12 ամիս:	
1.5. ԴԵՂՈՐԱՅՔ	
1.5.1. Բուժող բժշկի կողմից նշանակված դեղորայքի ձեռքբերման ծախսերի հատուցում 1.5.2. Բուժող բժշկի կողմից նշանակված դեղորայքը անվճար/ուղեգրով ձեռք բերելու հնարավորություն համագործակցող դեղատների ցանցից	Հատուցվում է
1.6. ՀՂԻՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԾՆՆԴՕԳՆՈՒԹՅՈՒՆ*	
1.6.1. Պետական ծրագրից դուրս հղիության հսկողություն 1.6.2. Պաթոլոգիկ ընթացքով հղիության պահպանում ստացիոնար պայմաններում (այն դեպքում, երբ պաթոլոգիան սեռական ճանապարհով փոխանցվող ինֆեկցիաների կամ քրոնիկ հիվանդությունների արդյունք չէ) 1.6.3. Հղիության ընդհատում բժշկական ցուցումներով	150,000 ՀՀ դրամի սահմաններում
1.6.4. Հետծննդյան շրջանում հիվանդասենյակում կացության ծախսերի հատուցում՝ առավելագույնը 10 օր	Օրական 15,000 ՀՀ դրամի սահմաններում
1.6.1. Ծննդօգնություն ներառյալ կեսարյան հատումը	90,000 ՀՀ դրամի սահմաններում
* Բացառություն են հանդիսանում հղիության ընթացքի կամավոր ընդհատման համար կատարված ծախսերը, եթե առկա չեն առողջությանը կամ կյանքին սպառնացող իրավիճակներ:	
1.7. ԱԿՆԱԲՈՒԺՈՒԹՅՈՒՆ*	
1.7.1. Ախտորոշում 1.7.2. Աչքի բազմատեսակ վնասվածքների և հիվանդությունների բուժում թերապևտիկ և վիրաբուժական եղանակներով	Հատուցվում է
1.7.3. Տեսողության (դիոպտրիայի) փոփոխության դեպքում օպտիկական ապակիների/լինզաների և շրջանակների ձեռքբերման ծախսերի հատուցում մեկ անգամ	15,000 ՀՀ դրամի սահմաններում
* Բացառություն են հանդիսանում՝ կոսմետիկ նպատակներով կատարվող վիրահատությունները, տեսողական արատներն ուղղելու նպատակով իրականացվող վիրաբուժությունը:	
1.8. ԱՏԱՄՆԱԲՈՒԺՈՒԹՅՈՒՆ*	
1.8.1. **Ախտորոշում** ✓ Ռենտգեն ✓ Օրթոպանտոմոգրամա ✓ Համակարգչային տոմոգրաֆիա	Հատուցվում է 1.8.2 և 1.8.3 կետերի գծով և նշված կետերի

[4] **Սպասման ժամկետը** սկսվում է սույն պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից կամ նոր անձի ընդգրկման պահից: Ցանկացած ծախս՝ կապված Ծրագրով նախատեսված հիվանդությունների կամ բժշկական միջամտությունների հետ, որոնք ախտորոշվել են նշված ժամկետում, հատուցման ենթակա չեն սույն պայմանագրի ողջ ընթացքում: Հղիության պարագայում, եթե հղիությունը վարող բժշկի կողմից իրականացվող հղիության ժամկետի հաշվարկի համաձայն հղիության ժամկետի սկիզբը ընկնում է սպասման ժամկետի մեջ, ծախսերը հատուցման ենթակա չեն սույն պայմանագրի ողջ ընթացքում, ինչպես նաև՝ պայմանագրի վերակնքումից հետո:

	սահմանաչափերի ներքո
1.8.2. **Թերապիա** ✓ Կարիեսի և/կամ նրա բարդությունների բուժում ✓ Ուղիների մշակում ✓ Պլոմբավորում լուսակարծրացող պլոմբանյութով	4 ատամի բուժում այդ թվում՝ պլոմբավորված ատամների՝ յուրաքանչյուրը 30,000 դրամի սահմաններում
1.8.3. **Վիրաբուժություն** ✓ Ատամի պարզ հեռացում ✓ Ատամի բարդ հեռացում ✓ Իմաստության ատամի հեռացում	Հատուցվում է
1.8.4. **Օրթոպեդիա**	100,000 ՀՀ դրամ
1.8.5. **Լնդերի բուժում** ✓ Պարոդոնտիտ ✓ Գինգիվիտ	20,000 ՀՀ դրամի սահմաններում
1.8.6. **Պրոֆիլակտիկա** ✓ Ատամնաքարերի մաքրում ✓ Փայլեցում	1 անգամ՝ 25,000 ՀՀ դրամի սահմաններում
* ա) Բացառություն են կազմում էսթետիկ բուժման, փորձարարական մեթոդների և կոսմետիկ ատամնաբուժության ծախսերը: բ)Եթե Ապահովագրված անձը չի բուժվում Ապահովագրողի կողմից նշված ատամնաբուժական կլինիկայում, ապա Ապահովագրողի պահանջով պետք է անցնի հետբուժական հետազոտություն իր կողմից նշված կլինիկայում:	
1.9. ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ. 16-65 տարեկան Իրականացվում է Ապահովագրողի կողմից ընտրված Բժշկական հաստատությունում	
1.9.1. Թերապևտի խորհրդատվություն 1.9.2. Տեսողության ստուգում 1.9.3. Ատամնաբույժի խորհրդատվություն 1.9.4. Որովայնի խոռոչի, փոքր կոնքի օրգանների և վահանաձև գեղձի ուլտրաձայնային հետազոտություն 1.9.5. Էլեկտրասրտագրություն (ԷՍԳ) 1.9.6. Կանանց համար գինեկոլոգի խորհրդատվություն կամ տղամարդկանց համար ուրոլոգի խորհրդատվություն 1.9.7. Արյան ընդհանուր քննություն լեյկոբանաձևով 1.9.8. Շաքարի որոշում արյան մեջ 1.9.9. Կրծքագեղձի ուլտրաձայնային հետազոտություն, բժշկի նշանակման դեպքում՝ մամոգրաֆիական հետազոտություն 1.9.10. PAP թեստ 30 տարեկանից բարձր կանանց համար 1.9.11. PSA թեստ 45 տարեկանից բարձր տղամարդկանց համար 1.9.12. Լիպիդային պրոֆիլ 1.9.13. TTG,T3 և T4 հորմոնի հետազոտություն, անհրաժեշտության դեպքում էնդոկրինոլոգի խորհրդատվություն	1 անգամ
1.10. ԱՅԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	
1.10.1. **Պատվաստումներ,** որոնք անհրաժեշտ են արտասահման մեկնելու համար	Հատուցվում է
1.10.2. **Բժշկական պարագաներ՝** ներարկիչ, բամբակ, բինտ, կորսետ, էլաստիկ գուլպաներ, վենոզ կատետեր, երակային կաթիլային համակարգ, անշարժացնող միջոցներ, ճողվածքի պլաստիկայի ցանց	50,000 ՀՀ դրամի սահմաններում
1.10.3. **Այլընտրանքային բժշկության մեթոդներ՝** ասեղնաբուժություն, բուժական մերսում	80,000 ՀՀ դրամի սահմաններում
1.10.4. **Ֆիզիոթերապիա՝** ✓ Էլեկտրոֆորեզ, ✓ ֆոնոֆորեզ, ✓ կրիոթերապիա, ✓ ԳԲՀ (գերբարձր հաճախականության թերապիա) - թերապիա, մագնիտոթերապիա, ✓ ուլտրաձայնային թերապիա, ✓ էլեկտրոստիմուլյացիա: 1.10.5. **Լազերաթերապիա** 1.10.6. **Կինեզոթերապիա**	1 կուրս՝ 15 սեանս
1.10.7. **Երկրորդ կարծիք.** եթե Ապահովագրված անձը համաձայն չէ բժշկի եզրակացության հետ, նա կարող է իր հաշվին անցնել 2-րդ հետազոտությունը: Եթե, արդյունքում, եզրակացությունները էապես տարբերվում են, Ապահովագրողն	Տրամադրվում է

իրավունք ունի պահանջելու անցնել 3-րդ հետազոտությունը (տվյալ ոլորտում առաջատար մասնագետի մոտ), որն իրականացվում է Ապահովագրողի հաշվին: Եթե 3-րդ կարծիքն էապես տարբերվում է 1-ին մասնագետի տրամադրած եզրակացությունից Ապահովագրողը հատուցում է 2-րդ կարծիքի հետ կապված ծախսերը, հակառակ դեպքում այն հատուցման ենթակա չէ:	
1.10.8. **Բժշկական ասիստանս.** անհրաժեշտության դեպքում, եթե ապահովագրված անձի մոտ ախտորոշվում է հիվանդություն, որի կապակցությամբ նա ցանկանում է ստանալ խորհրդատվություն արտասահմանի լավագույն մասնագետների կողմից, անցնել հետազոտություններ արտասահմանի լավագույն կլինիկաներում, ապա Ապահովագրողը աջակցում է համապատասխան մասնագետի, կլինիկայի ընտրության հարցում և կազմակերպում համապատասխան ծառայության մատուցումը: Ծառայությունների համար վճարումը կատարվում է Ապահովագրված անձի կողմից:	Տրամադրվում է

1.11. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ
1.11.1. Սույն պայմանագրի ներքո կարող են ապահովագրվել Ապահովադրի աշխատողները և ապահովագրված աշխատողների ընտանիք անմիջական անդամները՝ մինչև 21 տարեկան զավակ(ներ), մինչև 65 տարեկան ամուսին/կին, ծնող(ներ): Աշխատողի ընտանիքի անմիջական անդամները կարող են ապահովագրվել Պայմանագրով նախատեսված նույն պայմաններով հետևյալ կարգով՝ 1.11.1.1. Տվյալ աշխատողի ապահովագրության գործողության սկզբից հետո մեկ ամսվա ընթացքում: 1.11.1.2. Պայմանագրի ներքո ապահովագրված անձ-աշխատողի ամուսնության դեպքում ամուսինը կարող է ապահովագրվել ամուսնության օրվանից մեկ ամսվա ընթացքում: 1.11.1.3. Պայմանագրի ներքո ապահովագրված անձ-աշխատողի զավակ(ներ)ի ծննդյան դեպքում զավակ(ներ)ը կարող են ապահովագրվել ծնունդյան օրվանից մեկ ամսվա ընթացքում: Ընդ որում Ապահովագրված անձ-աշխատողի ընտանիքի անդամի ապահովագրության դեպքում Ապահովագրողն իրավունք ունի պահանջելու ներկայացնել ընտանեկան կապը հաստատող փաստաթուղթ: Ընտանիքի անդամների ապահովագրության դեպքում գործում են հետևյալ ապահովագրավճարները՝

ՏԱՐԻՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ	ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐ ՀՀ ԴՐԱՄ
0-17	93,750
18-40	187,500
41-65	225,000

Նույն ընտանիքից 3 և ավելի ընտանիքի անդամի միաժամանակյա ապահովագրության դեպքում յուրաքանչյուր ապահովագրվող ընտանիքի անդամի համար կիրառվում է 0.9 գործակից:

1.11.2. Ապահովագրությունը գործում է Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում:

1.11.3. Նշանակված դեղորայքը կամ ախտորոշիչ հետազոտությունները հատուցվում են միայն այն հիվանդությունների կապակցությամբ, որոնք ներառված են Ծրագրում:

2. ԲԱՑԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ծրագրով որպես ապահովագրական պատահար չեն դիտվում և հատուցման ենթակա չեն.
2.1. Մինչ ապահովագրության գործողության ուժի մեջ մտնելը առաջացած դեպքերը, վիճակները, հիվանդությունները, որոնց գծով կատարված բժշկական միջամտությունները դեռ չեն ավարտվել կամ ունեն տրամաբանական շարունակություն
2.2. Դեպքերը և վիճակները, որոնց գծով չեն ներկայացվել կամ թերի են հատուցում ստանալու համար անհրաժեշտ փաստաթղթերը
2.3. Առանց բժշկական ցուցման իրականացված ցանկացած բժշկական ծախս: Ապահովագրված անձի կողմից բժշկի նշանակումներին չհետևելու կամ դրանցից հրաժարվելու հետևանքով առաջացած ծախսերը
2.4. Վնասվածքներ, որոնք հասցվել են ալկոհոլի, թմրանյութի և տոքսիկ նյութի օգտագործման հետևանքով. ալկոհոլային և թմրադեղային թունավորումների բուժում, թմրամոլություն, ալկոհոլիզմ, տոքսիկոմանիա և դրանց հետևանքները
2.5. Ապահովագրված անձի կողմից ինքնիրեն կանխամտածված մարմնական վնասվածքների պատճառում: Ինքնասպանության փորձ
2.6. Հատուկ վտանգավոր վարակներ (բնական օսպա, ժանտախտ, սիբիրյան խոց, խոլերա, բծավոր տիֆ, վիրուսային հեմոռագիկ տենդեր՝ Էբոլա, Լասսա, Մարբուրգ), ՀՀ և ԼՂՀ իրավասու մարմինների կողմից հայտարարված համաճարակներ, նաև այն տարածքներից ներմուծված վարակները, որոնց սահմաններում հայտնաբերվել և ճանաչվել/հայտարարվել են համաճարակների օջախներ
2.7. ՄԻԱՎ, ՁԻԱՀ, սեռական վարակներ, այդ թվում առավելապես սեռական ճանապարհով փոխանցվող վարակներ (բուժում և յուրաքանչյուր հիվանդության և/կամ վարակի համար հետազոտություն, այդ թվում՝ բացահայտմանն ուղղված հետազոտություն), սեռական օրգանների սնկային հիվանդություններ
2.8. Ճառագայթային հիվանդություն և դրա հետևանքները
2.9. Տուբերկուլյոզ
2.10. Հեպատիտ B, C, D և E, այդ թվում դրանց բացահայտմանն ուղղված հետազոտությունները, լյարդի ցիռոզ, քրոնիկ երիկամային անբավարարություն, պլանային հեմոդիալիզ

2.11. Շաքարային դիաբետ և դրա բարդությունները, այդ թվում դրա բացահայտման համար նախատեսված հետազոտությունները
2.12. Չարորակ հիվանդությունների ոչ վիրահատական բուժում
2.13. Բնածին անոմալիաներ, զարգացման արատներ, ժառանգական և գենետիկ հիվանդություններ, այդ թվում՝ պոչուկի էպիթելային ուղիներ, և դրանց բարդությունները (բուժում և հետազոտություններ, այդ թվում՝ բացահայտմանն ուղղված հետազոտություններ)
2.14. Հակաբեղմնավորում, արհեստական բեղմնավորում
2.15. Բուժխնամք, բժիշկ-թերապևտի տնային կանչ
2.16. Ծրագրով չնախատեսված վերականգնողական բուժում, փորձարարական և այլընտրանքային բժշկության մեթոդներ. իրիդոդիագնոստիկա, աուրիկուլոդիագնոստիկա, ասեղնաբուժական ախտորոշում, ասեղնաբուժություն, բուժական մերսում, էլեկտրոնային բիոֆունկցիոնալ օրգանոմետրիա, մանուալ թերապիա, էներգաինֆորմատիկա, ցուբոթերապիա, էլեկտրաասեղնաբուժություն, հիրուդոթերապիա, ֆիտոթերապիա, հոմեոպաթիա, ախտորոշում Ֆոլլի մեթոդով և այլն
2.17. Վիտամինաթերապիա, բացառությամբ սույն Հավելվածի 1.6 կետի, կենսաբանական ակտիվ հավելումներ, հոմեոպատիկ դեղամիջոցներ, կոսմետիկ միջոցներ, խոտաբույսեր, տարբեր ծագման յուղեր
2.18. Այն ծառայությունները և բուժումը, որոնք մատուցվում են կանխարգելիչ և առողջարանային նպատակներով, կանխարգելիչ մերսում, ջրային պրոցեդուրաներ, աղիքների մոնիթորինգային մաքրում, սաունա, սոլյարի և այլն
2.19. Էքստրակորպորալ բուժման մեթոդներ. օզոնաթերապիա, պլազմաֆերեզ, հիպերբարիկ օքսիգենացում, ալֆա-կապսուլա
2.20. Էնդոպրոթեզավորում, բացառությամբ պայմանագրի գործողության ընթացքում տեղի ունեցած դժբախտ պատահարի հետևանքների, երբ այլ ընտրանքային բուժում չկա, էնդոպրոթեզ, օրգանների փոխպատվաստում
2.21. Պրոթեզներ, իմպլանտներ, հարմարանքներ (լսողական սարքեր, տեսողական սարքեր, օպտիկական ապակիներ/լինզաներ, շրջանակներ, հաշմանդամային սայլակներ, օրթոպեդիկ հարմարանքներ, այդ թվում՝ օրթոպեդիկ բարձ, օրթոպեդիկ ներքնակ, օրթոպեդիկ ներդիր, տակդիր, և այլն)
2.22. Պլաստիկ և կոսմետիկ նպատակներով իրականացվող վիրաբուժություն (ներառյալ պլաստիկ և վերականգնողական վիրաբուժությունը), բացառությամբ պայմանագրի գործողության ընթացքում տեղի ունեցած դժբախտ պատահարի հետևանքների, մաշկի հիվանդությունների (կոշտուկներ, պտկիկներ, գորտնուկներ և խալեր, կանդիլոմաներ) և դրանց բարդացումների հետ կապված իրականացվող պլաստիկ և վերականգնողական վիրահատություններ
2.23. Նյարդային համակարգի դեմիելինիզացնող հիվանդություններ: Աուտոիմուն և շարակցական հյուսվածքի համակարգային հիվանդություններ, պսորիազ, օնիխոմիկոզներ, սեբորեա, ակնե (կորյակացան)
2.24. Հոգեթերապևտի ծառայություններ, հիպնոս: Նևրոզներ և սահմանային վիճակներ (նեյրոցիրկուլյատոր դիստոնիա, վեգետաանոթային դիստոնիա, աստենո-դեպրեսիվ համախտանիշ, աստենո-նևրոտիկ համախտանիշ և այլն), հոգեկան հիվանդություններ
2.25. Քաշի և խոսքի շտկում, տեսողության շտկում լազերային վիրաբուժության մեթոդների օգնությամբ, սեռի վիրաբուժական փոփոխում
2.26. Ատամնաբուժության մեջ թերմոֆիլների օգտագործում, օրթոդոնտիա
2.27. Մեքենավարման, զինակրության իրավունքի, սպորտաառողջարանային միջոցառումների մասնակցելու, ուսումնական հաստատություն ընդունվելու համար հետազոտությունների անցկացում և տեղեկանքների տրամադրում
2.28. Ծրագրում չընդգրկված ցանկացած բժշկական ծառայություն և բժշկական նշանակության ապրանք

Պատասխանատու ստորաբաժանման ղեկավար՝ Աննա Մանվելյան

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամ
Հասցե՝ ք. Երևան, Սայաթ Նովա պողոտա 29/1
ՀՎՀՀ 02580459
Հեռախոս՝ +374 10 58 80 11
Էլ. փոստ՝ info@r2e2.am
«Ինեկոբանկ» ՓԲԸ
h/h 2050422345051001

Տնօրեն՝ Կարեն Ասատրյան

ASATRYAN KAREN 3611790125

Digitally signed by ASATRYAN KAREN 3611790125
Date: 2024.03.06 13:22:38 AMT

ԿԱՏԱՐՈՂ

«ԷՖԵՍ» ԱՓԲԸ
Հասցե՝ ք. Երևան, Հր. Քոչար 35/1
ՀՎԷԷՀ 08261284
Հեռախոս՝ +374 10 700 800
Էլ. փոստ՝ info@efes.am
«Արարատբանկ» ԲԲԸ
h/h 1510012541361314

Տնօրեն՝ Արևշատ Մելիքսեթյան

MELIKSETYAN AREVSHAT 2008830063

Digitally signed by MELIKSETYAN AREVSHAT 2008830063
Date: 2024.03.05 16:12:39 +04'00'

Հավելված N 2
«05» Մարտ 2024թ. կնքված
ՀՎԷԷՀ-ԳՀԾՁԲ-01/2024 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության					
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2024թ-ին՝ ըստ փուլերի, այդ թվում**		
1	65511120	Առողջության ապահովագրության ծառայություններ	05 մարտի 2024թ. – 01 օգոստոսի 2024թ	01 օգոստոսի 2024թ – 25 դեկտեմբերի 2024թ	Ընդամենը
			2 677 500	2 677 500	5355000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*
*** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամ
Հասցե՝ ք. Երևան, Սայաթ Նովա պողոտա 29/1
ՀՎՀՀ 02580459
Հեռախոս՝ +374 10 58 80 11
Էլ. փոստ՝ info@r2e2.am
«Ինեկոբանկ» ՓԲԸ
h/h 2050422345051001

Տնօրեն՝ Կարեն Ասատրյան

ASATRYAN KAREN 3611790125
Digitally signed by ASATRYAN KAREN 3611790125
Date: 2024.03.06 13:23:24 AMT

ԿԱՏԱՐՈՂ

«ԷՖԵՍ» ԱՓԲԸ
Հասցե՝ ք. Երևան, Հր. Քոչար 35/1
ՀՎԷԷՀ 08261284
Հեռախոս՝ +374 10 700 800
Էլ. փոստ՝ info@efes.am
«Արարատբանկ» ԲԲԸ
h/h 1510012541361314

Տնօրեն՝ Արևշատ Մելիքսեթյան

MELIKSETYAN AREVSHAT 2008830063
Digitally signed by MELIKSETYAN AREVSHAT 2008830063
Date: 2024.03.05 16:13:12 +04'00'

Հավելված 3
«05» Մարտ 2024թ. կնքված
ՀՎԷԷՀ-ԳՀԾՁԲ-01/2024 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
«05» Մարտ 2024թ. կնքված
ՀՎԷԷՀ-ԳՀԾՁԲ-01/2024 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն